ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունիսի 2024 թվականի թիվ 676-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՈԴ 108-34 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին հասցեագրված՝ քաղաքացի Սուսաննա Խաչիկի Ադամյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքով (նոտարական ակտի կոդ 787-20240618-84-8042953) իրեն փոխանցված գույքային իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի վարձակալության պայմանագիրը իր անվամբ վերաձևակերպելու մասին,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող /կոդ 108-34/ գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության 0,25 հեկտար մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը վերաձևակերպել վարձակալ Յուրիկ Սուրենի Ադամյանի մահից հետո (մահացած 20/09/2022 թվական) ժառանգություն ընդունած ժառանգ՝ Սուսաննա Խաչիկի Ադամյանի անվամբ:
2. 2003 թվականի նոյեմբերի 20-ին կնքված, գրանցամատյանում թիվ 1908 համարով վարձակալության պայմանագրի մնացած պայմանները թողնել անփոփոխ:
3. Հողամասի վարձակալության պայմանագրի վերջնաժամկետն է՝ 2028 թվականի նոյեմբերի 20-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 հունիսի 2024 թվական
գյուղ Ախուրյան